

ըր կը գտնէ աստուածային իր պայծառութիւնը, ամէնէն ազնիւ նաշիհն ալ ստուերի տակ ձգող սպիտակութեամբը: Ու կ'առնէ արեւէն շափիւղայ ու ոսկի, կարկեհան ու զմրուխտ, այնքան առատ ու բնական, որ կը փախցնես աչքերդ, շլացումէն ցաւելու սկսած: ... Հայերը միայն մօտիկը կը մնան սա խորհրդաւոր ապրումներուն: Անոնք են, որ սիրտ պիտի ընէին սա մռայլ, բայց ներսէն ձիւնափառ մերձաւորութիւններու հետ հաշտեցնել իրենց պատմութեան քիչերէ ընդզգացուած սա տառապանքը իրեն, ով գիտէ ո՛ր դարուն, բռնի հանուեցան իրենց գեղերէն, Հայաստանի յորդ ու պայծառ կանանչաստանէն ու ձգուեցան բախտին ալիքներուն, որոնք զիրենք բերին խրեակներու նման թիմելու սա քարեղէն ծովուն շրթներուն: Չրլլար այդ ժայռաբլուրի ստորոտին գեղանի, հրաշալի, յորդ ու աղամանդ աղբիւրը, մարդիկ պիտի վախնային սա հսկայական գերեզմանէն, որ այդ բլուրն է, երբ մէջը խորանաս: Մարմարը, որ տուած է գեղին անունը, կայծակնահար կողերու վրայ արիւնի հանգոյն կարմիր արատներ ալ կը ցուցադրէ, խորացնելով աղէտի զգայնութիւնները ներսը, կարծես պատմել ջանալով տառապանքը, զոր կրակը դրած է անոր լեարդին: Կան այսպէս գորշամոյն այդ տեսարանի վրայ ջարդուող, արնաշաղախ առանձին միութիւններ, կղզեակներու նման, որոնք դիմացէն արեան մէջ սառած մարմիններ կը թելադրեն, նոր աւարտած ճակատամարտէ մը ետք:

- Ի՛նչ դաժան է այդ ամէնը, աղբէր ճան:

Կը նայիմ քաղցր ու հաճ հոգիով մը: Բնութեան վրայ աչք ունեցող ամէն մարդու մէջ դժուար չէ զգալ անասունէն անդինը, առնուազն արուեստագէտը:

- Կը գա՞ք հոս յաճախ:

Չեմ պատասխաներ: Բայց կը դառնամ իմ տպաւորութեանս միտքին, մօտիկ անցեալէն: Ըսի, թէ մեծ գերեզմանն էր յատակը այդ ապրումներուն (մահը, պատանի, ամէնօրեայ ընկեր մըն էր ինծի. քաղաքէն գնուած ու վանքի մը մէջ հասունցած): Սուգին ընդարձակ քողը,